



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 06/18**

12.06.2018թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (**այսուհետ՝ Կենտրոն**), քննարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի¹ 381-րդ հոդվածի 2-րդ մասի «Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, ..., վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության» ձևակերպման՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ ՀՀ վճռաբեկ դատարան) 20.03.2018 թվականի որոշմամբ, կասեցնելով թիվ ԵԿԴ/0056/11/17 քրեական գործի վարույթը, միջնորդել է ՀՀ Սահմանադրական դատարանին որոշելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, ..., վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության» ձևակերպման՝ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին և 78-րդ հոդվածին համապատասխանության հարցը այնքանով, որքանով ձևական սխալների առկայության հիմքով վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելն անհամաչափորեն սահմանափակում է անձի արդար դատաքննության իրավունքը:

Վերլուծելով դատական մատչելիության իրավունքի բովանդակությունը ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումների և Մարդու իրավունքների եվրոպական

¹ Ընդունվել է 01.07.1998թ., ուժի մեջ է մտել 12.01.1999թ., ՀՕ-248, տե՛ս ՀՀՊՏ1998.09.21/22(55):

դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ դատական պաշտպանության իրավունքի իրացման չափանիշներ ու պահանջներ սահմանելիս պետք է ապահովված լինի նվազագույն ջանքերի գործադրմամբ դրանք հաղթահարելու հնարավորությունը: Ընդ որում, այն դեպքերում, երբ այդ չափանիշները և պահանջները կրում են ձևական բնույթ և կարող են հաղթահարվել նաև այլընտրանքային եղանակներով, դրանց չպահպանումը չպետք է գերակայի դատական պաշտպանության իրավունքի նկատմամբ: Այլ կերպ՝ ձևական բնույթ կրող կարգավորումները չպետք է այն աստիճան չափազանցվեն (*excessive formalism*), որ դատական պաշտպանության իրավունքից օգտվելու չափանիշների և պահանջների չպահպանման արդյունքում վրա հասնող իրավական հետևանքն անհամաչափորեն սահմանափակի անձի դատական մատչելիության իրավունքը:

Իր որոշման մեջ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջները.

- մեծամասամբ տեխնիկական են, որի պատճառով հաճախ դրանց չպահպանումը զուտ անփութության արդյունք է,
- անվերականգնելի չեն և դրանք չպահպանելու, թերություններով վերաքննիչ բողոք ներկայացնելու պարագայում կարող են շտկվել բողոքաբերի կողմից:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու պարագայում, երբ անձը վերաքննիչ բողոքում թույլ տված ձևական սխալի արդյունքում զրկվում է իրեն առնչվող դատական ակտի իրավափաշությունը վերադաս դատական ատյանի կողմից վերանայման ենթարկելու իրավունքից, խախտվում է կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև համարժեք հարաբերակցությունը, քանի որ իրականացվող միջամտությունն իր բնույթով սահմանափակում է վերաքննիչ դատարանի մատչելիության իրավունքը: Արդյունքում խաթարվում է կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև արդարացի հավասարակշռությունը, քանի որ կիրառվող միջոցը հետապնդվող նպատակի համեմատ չափից ավելի խիստ է, այն շրջանցում է այդ նույն նպատակին նվազագույն ջանքերի գործադրմամբ այլ միջոցներով հասնելու ողջամիտ հնարավորությունները:

Իր որոշման մեջ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ձևական թերությունների պատճառով վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու պարագայում անհամաչափորեն սահմանափակվում է անձի՝ վերաքննիչ դատարանի մատչելիության իրավունքը: Մինչդեռ ինչպես գործող օրենսդրության կարգավորումները, այնպես էլ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ անձին դատական մատչելիության իրավունքից զրկելու այլընտրանքային լուծում կարող է լինել վերաքննիչ բողոքը վերադարձնելու և բողոքի հեղինակին թույլ տրված թերությունները շտկելու հնարավորության ընձեռումը:

Վճռաբեկ դատարանը, այսպիսով, գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի «Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, ..., վերաքննիչ

դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության» ձևակերպման ուժով ձևական սխալների առկայության պարագայում վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելն անհամաչափորեն սահմանափակում է արդար դատաքննության, այդ թվում՝ վերաքննիչ դատարանի մատչելիության իրավունքը:

ՀՀ սահմանադրական դատարանի 27.04.2018թ. թիվ ՍԴԱՌ-32 աշխատակարգային որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա գործն ընդունվել է քննության և նիստ է նշանակվել 2018 թվականի հունիսի 19-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության բովանդակությունը ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի դատական պրակտիկային համապատասխան մի շարք գործերով արդեն իսկ բացահայտվել է Կենտրոնի կողմից նախկինում տրված եզրակացություններով:

ՀՀ գործող Սահմանադրությամբ անձի՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող սահմանադրաիրավական նորմերի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

...

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

...

Նշված սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՌ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՌ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՌ-690 և մի շարք այլ որոշումներում:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՌ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՌ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՌ-690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14,

18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ **իրավական բավարար նախադրյալների ստեղծումն** ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար **արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը:**

Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է²:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է **պետության պոզիտիվ պարտականությունը՝** ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, **օրենսդրի պարտականությունը՝** լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, **իրավակիրառողի պարտականությունը՝** առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:³

² ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. հունվարի 16, ՍԴՈ-673, 8-րդ կետ:

³ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

ՀՀ Սահմանադրության՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող 18-րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկայում, որպես կանոն, վկայակոչվում է 19-րդ հոդվածի հետ սերտ միասնության մեջ՝ որպես իրենից մեկ միասնական իրավական երևույթ ներկայացնող: Դա մասնավորապես վերաբերում է **արդարադատության մատչելիության իրավունքին**՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի, որի սահմանադրական ամրագրումը դիտարկվում է 18-րդ և 19-րդ հոդվածներում՝ միաժամանակ և միասնաբար՝ չկոնկրետացնելով դրա սահմանադրական-տեքստային հիմքը⁴:

Արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. **«Դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջմունքներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն»**⁵:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ **անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել** անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսպիսով, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով ամրագրված (2005թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներ) դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության էությունը անձի իրավունքների և ազատության պաշտպանության համար դատարան դիմելու, այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի սահմանումն է և այդ իրավունքի պատշաճ իրականացման համար պետության կողմից գործուն մեխանիզմների և մատչելի պայմանների ստեղծումն ու երաշխավորումը:

⁴ ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջեր 222-223:

⁵ Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995:

ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մարչելի: Նման իրավիճակն անհամարելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին աստիճանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շրկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական աստիճաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս աստիճաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը»⁶:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշման մեջ մասնավորապես արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է.

...գ) ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված ստորադաս դատարանների լիազորությունների շրջանակը, իրականացման կարգն ու պայմանները...» (ընդգծումը մերն է՝ Գ.Կ.):

ՀՀ սահմանադրական դատարանն իր 08.10.2008 թիվ ՍԴՈ-765 որոշմամբ արձանագրել է.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ,

⁶ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը»:

15.07.2011թ. թիվ ՍԴՈ-984 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը հատուկ նշել է. «Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (*restitutio in integrum*): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում...»:

Սույն գործով վիճարկվող քրեադատավարական դրույթի սահմանադրականությունը գնահատելիս հատկապես անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ սահմանադրական դատարանի 03.03.2015թ. թիվ ՍԴՈ-1192 որոշման 7-րդ կետին, որտեղ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«7. Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու լիազորությունների իրականացման համար, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը: Նշված համատեքստում սահմանադրական դատարանը կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, ինչն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունն ինչպես այլ, այնպես էլ վճռաբեկ վարույթում գնահատելու առումով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ: **Վճռաբեկ բողոքի ընդունելիության**

պայմանները սահմանելիս պետք է գերակայեն վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման երաշխիքները: Վճռաբեկ դատարանի՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ»:

Կամ, ՀՀ սահմանադրական դատարանի 10.03.2016թ. ՍԴՈ-1257 որոշման 7-րդ կետի համաձայն.

«7. Իր մի շարք որոշումներով (ՍԴՈ-652, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-765, ՍԴՈ-844, ՍԴՈ-873, ՍԴՈ-890, ՍԴՈ-932, ՍԴՈ-942, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1052, ՍԴՈ-1115, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190, ՍԴՈ-1192, ՍԴՈ-1196, ՍԴՈ-1197, ՍԴՈ-1220, ՍԴՈ-1222) սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր՝ հավասարապես ընդգծելով դրանց կարևորությունը դատաընթացակարգային բնագավառներում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ 2015թ. փոփոխություններով Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների իրավակարգավորման հիմքում դրված են անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման սահմանադրաիրավական այն սկզբունքները, որոնց համապեքստում սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ: Այդ դիրքորոշումներն արտացոլում են նաև միջազգային իրավական փորձի համալիր ուսումնասիրության արդյունքները: Հետևաբար, սահմանադրական դատարանը վերահաստատում է իր նախորդ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները և արձանագրում, որ դրանք այնքանով, որքանով վերաբերելի են վեճի առարկա իրավակարգավորմանը, կիրառելի են նաև սույն գործի շրջանակներում:

Սահմանադրական դատարանը վերոթվարկյալ որոշումներում կարևորել է իրավակարգավորման սկզբունքներ (չափանիշներ), որոնք սույն գործով վեճի առարկա նորմի սահմանադրականության գնահատման տեսանկյունից ունեն սկզբունքային նշանակություն, մասնավորապես.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- դատական ակտի դեմ ներկայացված բողոքի ընդունելիության պայմաններ, բողոքարկման ժամկետ սահմանելիս պետք է գերակայեն դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիքները,

- դատական ակտի պարզառաբանվածությունը, ըստ որի ընդունվում կամ մերժվում է անձի դիմումը, ինչպես նաև դատական ակտի բողոքարկման իրավունքը մատչելիության իրավունքի իրացման երաշխիքներ են,

- օրենսդրական կանոնակարգումը չի կարող սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն առաջացնել անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, արդյունքում չապահովելով դատարանի մատչելիության իրավունքը»:

* * *

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում վիճարկվող նորմի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունը հետևյալն է.

2. Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, բերել է այն անձը, ով չունի այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է կամ բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման կամ բերվել է 375⁴ հոդվածի պահանջի խախտմամբ, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասը վերաբերում է այն պահանջներին, որոնց պետք է համապատասխանի վերաքննիչ բողոքը: Մասնավորապես, այդ դրույթի համաձայն՝

1. Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝

1) այն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.

2) տվյալներ՝ բողոք բերած անձի մասին՝ նշելով նրա դատավարական կարգավիճակը, բնակության կամ գտնվելու վայրը.

3) դատական ակտը, որը բողոքարկվում է, և այն կայացրած դատարանի անվանումը.

4) նշում այն մասին, թե դատական ակտը բողոքարկվում է ամբողջությամբ, թե մի մասով.

5) բողոքի հիմքերը և պահանջը.

5') վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները՝ վկայակոչելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում՝ մեջբերելով դրանց հակասող մասերը և կատարելով համեմատական վերլուծություն, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը.

6) առկայության դեպքում՝ այն ապացույցները, որոնցով դիմողը հիմնավորում է իր պահանջները, և որոնք պետք է հետազոտվեն վերաքննիչ դատարանում, այդ թվում՝ նաև առաջին ատյանի դատարանում նախօրոք չհետազոտված ապացույցները.

7) բողոքին կցվող նյութերի ցանկը.

8) բողոք ներկայացնող անձի ստորագրությունը:

Այսպիսով, ըստ վերևում քննարկված սահմանադրական դատարանի որոշումների և Եվրոպական դատարանի դատական պրակտիկայի՝ դատաքննության և դրա մասնավոր տարրը հանդիսացող մատչելիության իրավունքը «բացարձակ իրավունք» չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, հայցի (բողոքի կամ դիմումի) ընդունելիության պայմանների առնչությամբ: Սակայն անձի դատական քննության իրավունքի մատչելիությունը և իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար պետությունը կաշկանդված է պատշաճ պայմաններ և մեխանիզմներ մշակելու և երաշխավորելու պարտականությամբ:

Քրեական դատավարությունում վերաքննիչ բողոքի ստորագրված լինելը դրան ներկայացվող ձևական պահանջ է, իսկ այդ պահանջը չպահպանելու պարագայում վերաքննիչ բողոքն առանց քննությանը թողնելը՝ ընթացակարգային առանձնահատկություն:

Կարծում ենք, քննարկվող ձևական պահանջի չպահպանման պարագայում վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու ընթացակարգային առանձնահատկությունը սահմանափակում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի (համաչափության սկզբունք) համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Վերաքննիչ բողոք ներկայացնելիս ձևական սխալ թույլ տալու, այն է՝ վերաքննիչ բողոքը ստորագրված չլինելու արդյունքում այն առանց քննության

թողնելու պարագայում անձը զրկվում է արդար դատաքննության՝ վերաքննիչ բողոք ներկայացնու և արդարադատության մատչելիության իրավունքից: Այլ կերպ ասած՝ ձևական պահանջի չպահպանման պատճառով սահմանափակվում է անձի արդար դատաքննության հիմնական իրավունքը, որպիսի սահմանափակման պարագայում խախտվում է կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի համարժեքությունը:

Այս համատեքստում վիճելի քրեադատավարական դրույթի սահմանադրականությունը գնահատելիս հարկ է վիճարկվող քրեադատավարական դրույթը համեմատել քաղաքացիադատավարական և վարչադատավարական նույնաբովանդակ դրույթների հետ:

Այսպես, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ *վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջներից մեկը դրա ստորագրված լինելն է բողոք ներկայացնող անձի կողմից, իսկ այս պահանջի չպահպանումը, ըստ վիճարկվող դրույթի, հանգեցնում է այնպիսի իրավական հետևանքի, ինչպիսին է վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը վերաքննիչ դատարանի կողմից:*

Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջների մեջ դրա ստորագրված լինելն այն ներակայացնող անձի կողմից սահմանված է նաև ՀՀ վարչական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերում:

Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

3. Վերաքննիչ բողոքը ստորագրում է բողոք բերող անձը կամ նրա ներկայացուցիչը:

Նույնաբովանդակ դրույթ է բովանդակում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 4-րդ մասը:

Ընդ որում, թե՛ քաղաքացիական, թե՛ վարչական դատավարությունում վերաքննիչ բողոքի ստորագրված չլինելը ոչ թե վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու, այլ այն վերադարձնելու հիմք է:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝

1) չեն պահպանվել սույն օրենսգրքի 134-րդ հոդվածի պահանջները.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝

1) չեն պահպանվել սույն օրենսգրքի 368-րդ հոդվածի պահանջները. (այդ թվում՝ բողոքի ստորագրված չլինելու պահանջը – Գ.Կ.):

Այսպիսով, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության, վարչական և քաղաքացիական դատավարություններում, վերաքննիչ բողոքի ստորագրված լինելու

պահանջը չպահպանելու իրավական հետևանքը վերաքննիչ բողոքը վերադարձնելն է, այլ ոչ թե այն առանց քննության թողնելը:

Դատավարական օրենսգրքերի և դրանց ընդունման հիմնավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը որևէ կերպ չի հիմնավորել նման տարբերակված մոտեցման ցուցաբերման անհրաժեշտությունը մի կողմից քաղաքացիական և վարչական, մյուս կողմից քրեական դատավարություններում: Ընդ որում, այդպիսի տարբերակված իրավակարգավորման հետապնդվող նպատակի էությունը օրենսդրի կողմից բացահայտված և պատճառաբանված չէ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան